ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչության սպասարկման թիվ 3 բաժնի պետ Իննա Հախումյանի և զարգացման և վարչարարության ռազմավարական ծրագրերի վարչության եկամուտների գնահատման և վերլուծության բաժնի գլխավոր հարկային տեսուչ Գրիգոր Հակոբյանի՝ 2025 թվականի փետրվարի 1-ից 7-ը Ղազախստանի Հանրապետություն (ք. Ալմաթի) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Իննա Հախումյան - ՀՀ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչության սպասարկման թիվ 3 բաժնի պետ,

Գրիգոր Հակոբյան - ՀՀ ՊԵԿ Զարգացման և վարչարարության ռազմավարական ծրագրերի վարչության եկամուտների գնահատման և վերլուծության բաժնի գլխավոր հարկային տեսուչ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ղազախստանի Հանրապետություն, քաղաք Ալմաթի, փետրվարի 1-ից 7-ը

3. Հրավիրող կողմը՝

Արժույթի միջազգային հիմնադրամի Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի կարողությունների զարգացման տարածաշրջանային կենտրոն (CCAMTAC)

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Դասընթացի նպատակն էր ներկայացնել գենդերային անհավասարության և մակրոտնտեսական արդյունքների փոխկապակցվածությունը: Մասնակիցները ուսումնասիրեցին ներառական և գենդերային զգայուն քաղաքականությունների ու ծրագրերի նույնականացման և նախագծման ուղղությունները:

Դասընթացը միտված էր մասնակիցներին ներկայացնելու մակրոտնտեսական նշանակություն ունեցող գենդերային անհավասարությունները և դրանց ազդեցությունը տնտեսական արդյունքների վրա: Դասընթացի ժամանակ ուսումնասիրվել են գենդերային անհավասարության խնդիրները, ինչպիսիք են կրթության, ենթակառուցվածքների և ֆինանսական ծառայությունների անհավասար

հասանելիությունը, ֆորմալ աշխատաշուկայում մասնակցությունը և առաջնորդության հնարավորությունները, որոնք խոչընդոտում են աճին, կայունությանը և դիմադրողականությանը՝ հանգեցնելով ռեսուրսների ոչ օպտիմալ օգտագործման և բաշխման: Դասընթացի շրջանակում ներկայացվել են նաև խոչընդոտները՝ ներառյալ իրավական, քաղաքական, ինստիտուցիոնալ արգելքները և խորը արմատավորված սոցիալական նորմերը, որոնք ամրապնդում են գենդերային անհավասարությունը:

ՀՆԱ-ի ձևավորման վրա իրենց ազդեցությունները ունեն կրթական, ժողովրդագրական, գենդերային անհավասարության և այլ գործոնները, որոնց մակարդակից և կառուցվածքից կախված կարող են ազդել երկրում ձևավորվելիք ՀՆԱ-ի վրա՝ հաշվի առնելով այդ խմբերի աշխատողների արտադրողականության տարբեր մակարդակները: Դասընթացին մասնակցությունը դրական ազդեցություն ունեցավ դասընթացին մասնակցած աշխատակիցների մասնագիտական աճի, փորձի փոխանակման, ինչպես նաև մակրոտնտեսական կանխատեսումներ և նմանատիպ վերլուծական աշխատանքների կատարման որակի ու արդյունավետության վրա:

5. Քննարկված թեմաները՝

Դասընթացի ժամանակ քննարկվել են հետևյալ հարցերը՝

1) *Գենդերային խզվածքը (Gender Gaps).*

Դասընթացի ընթացքում ներկայացվել է աշխատուժի մասնակցության մակարդակի սահմանումը, մասնավորապես՝ նշված ցուցանիշը որոշվում է աշխատող և աշխատանք փնտրող մարդկանց քանակների գումարի հարաբերությունը բնակչության քանակին՝ արտահայտված տոկոսով: Դասընթացի ժամանակ ներկայացվեց նաև Հայաստանի Հանրապետության աշխատուժի մասնակցության մակարդակները կանանց և տղամարդկանց համար, ինչպես նաև գենդերային անհավասարության մի քանի ցուցանիշների արդյունքները:

2) Գենդերային անհավասարության ուղղությունները.

Դասընթացի ընթացքում քննարկվել են անհավասարության արդյունքները, մասնավորապես՝ աշխատուժի մակարդակի, մասնագիտական տարանջատումների և աշխատավարձերի խզվածքի վերաբերյալ: Միաժամանակ, դասընթացի ընթացքում

քննարկվեցին հնարավորությունների անհավասարության և ներկայացվածության, ազատության անհավասարությունների ցուցանիշները: Քննարկվեցին հարկաբյուջետային, դրամավարկային, ֆինանսական և այլ կառուցվածքային քաղաքական միջոցառումների նշանակությունը կրթության, առողջապահության, աշխատաշուկայի մակարդակի բարձրացման, աշխատավարձերի հավասարության բարելավման նկատմամբ, ինչը իր հերթին կնպաստի տնտեսական աճին և կայունությանը:

3) *Գենդերային հավասարության և մակրոտնտեսական արդյունքների կապերը*.

Դասընթացի ընթացքում քննարկվել են մակրոտնտեսական քաղաքականության ազդեցությունը գենդերային հավասարության մակարդակի բարձրացման վրա, մասնավորապես՝ ներկայացվեց, որ բարձր գենդերային հավասարություն նշանակում է եկամուտների անհավասարության փոքր խզվածք, բարձր տնտեսական աճ, ավելի բարձր արտադրանքի և արտահանման դիվերսիֆիկացում և բարձր շահութաբերություն:

4) *Գենդերային անհավասարությունները՝ աշխատանքի արդյունքում ստացած եկամուտների նկատմամբ*.

Դասընթացի ընթացքում ներկայացվեց գենդերային անհավասարության ցուցանիշները, մասնավորապես՝ ժամավճարներ/աշխատավարձեր, աշխատած ժամեր և զբաղվածության մակարդակը: Դասընթացի ընթացքում ներկայացվեց, թե ինչ կլինի երկրների հետ վերոնշյալ խզվածքները փակելու դեպքում, ինչպես կաճի երկրի ՀՆԱ-ն: Մշակված գործիքակազմի միջոցով (Equity Gains Toolkit), որը մշակվել է Power BI-ով, ներկայացվեց Հայաստանի Հանրապետության համար վերոնշյալ խզվածքների փակման արդյունքում ՀՆԱ-ի աճի ցուցանիշը: Մասնավորապես՝ եթե փակվի զբաղվածության մակարդակի խզվածքը, ապա ՀՆԱ-ն կաճի 1,6 տոկոսով, ժամավճարների/աշխատավարձերի դեպքում աճը կկազմի 4,98 տոկոս և աշխատած ժամերի դեպքում՝ 5,44: Արդյունքում նշված 3 ցուցանիշների հավասարության դեպքում ՀՆԱ-ն կաճի 12,0 տոկոսով: Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ նշված գնահատականները տրվել են 2020 թվականի համար, ընդ որում, դասընթացի

ընթացքում ներկայացվեց, որ ՀՀ-ում վերոնշյալ գենդերային խզվածքները տարեց տարի նվազել են:

5) *Գենդերային անհավասարությունների խզվածքների նվազեցման վերաբերյալ քաղաքականության կիրառությունները*

Դասընթացի ընթացքում ներկայացվել են, թե ինչպիսի քաղաքականություն է կիրառվում տարբեր երկրներում, մասնավորապես՝

- Կանադայում, Դանիայում, Ֆինլադիայում, Կորեայում, Շվեդիայում, Սինգապուրում կիրառվում է երեխաների խնամքի սուբսիդավորում, ինչը խթանում է գենդերային հավասարությունը,
- Ճապոնիայում, Բոսնիա Հերցեգովինայում, Կոստա Ռիկայում և Ուրուգվայում կիրառվում է տարեցների համար պաշտպանություն, խնամք և աջակցություն,
- 41 բարձր եկամուտ ունեցող երկրներում կիրառվում է վճարովի ծննդաբերության արձակուրդ: Վճարովի մայրության արձակուրդը նպաստում է կանանց առողջությանը և ծննդաբերությունից հետո խթանում է աշխատանքի վերադառնալուն,
- Հայրության արձակուրդ: Հայրության արձակուրդը խրախուսում է երեխաների խնամքի պարտականությունների ավելի հավասար բաշխում,
- Անհատական հարկում, որը թույլ է տալիս նվազեցնել երկրորդ կերակրողի սահմանային դրույքաչափը, ինչը կարող է խրախուսել կանանց մասնակցել աշխատաշուկային:

Դասընթացի ընթացքում ներկայացվեց նաև այլ երկրներում կիրառվող քաղաքականությունը, որը խթանում է գենդերային հավասարություններին:

6) Դասընթացի ընթացքում ներկայացվեց տվյալների աղբյուրների ցանկը, ինչպես նաև առանձին շնորհանդես՝ Արժույթի Միջազգային Հիմնադրամի կողմից ստեղծված Հարկերի և արտոնությունների վերլուծության գործիքի վերաբերյալ (Tax and Benefits Analysis Tool(TAXFIT)), որը աշխատում է Power BI ծրագրով: Վերոնշյալ գործիքը հնարավորություն է տալիս ընտրել երկիրը, հաշվետու տարին, երեխաների քանակը, այդ թվում՝ նորածին և դեռ չծնված, ընտանեկան կարգավիճակը (ամուսնացած), կնոջ և տղամարդու վաստակած եկամուտները: Արդյունքում

վերոնշյալ գործիքը ցույց է տալիս յուրաքանչյուր երկրի համար ընտրված պարամետրերին համապատասխան արտոնությունների, սոցիալական աջակցությունների և եկամտային հարկի միջին չափը արտահայտված տոկոսներով: Նշված վերլուծական գործիքը կարող է օգտակար լինել հարկերի և հարկային արտոնությունների քաղաքականություն մշակողների համար, սակայն անհրաժեշտ է նշել, որ TAXFIT վերլուծական գործիքում Հայաստանը ներառված չէ, ընդ որում, ներառված են ընդամենը 34 երկիր:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Ալմաթիում կայացած միջոցառմանը մասնակցել են Հայաստանի, Ուզբեկստանի, Ղրղզստանի, Ղազախստանի, Ադրբեջանի, Տաջիկստանի և Մոնղալիայի տարբեր պետական մարմինների ներկայացուցիչներ: Դասընթացավարները ներկայացրել են միջազգային փորձը, վերլուծություններ և մի շարք թվային տվյալներ, թե ինչպես է կանանց ներգրավվածությունը աշխատաշուկայում խթանում տնտեսական աճը տարբեր երկրներում և նպաստում երկրի ՀՆԱ-ի աճին:

Դասընթացի ընթացքում մասնակիցներին հանձանարարվել էր բաժանվել խմբերի և պատրաստել շնորհանդես ներկայացված թեմաների շրջանակներում: Հայաստանի ներկայացուցիչների (ՀՀ ՊԵԿ երկու աշխատակից և ՀՀ վիճակագրական կոմիտեի 1 աշխատակից) խմբում ընդգրկված էին նաև թվով 3 այլ պետությունների ներկայացուցիչներ, և որպես ուսումնասիրվող երկիր ընտրվել էր Հայաստանի Հանրապետությունը: Իրականացվել են բազմաթիվ ուսումնասիրություններ, այդ թվում՝ ՀՀ-ում ըստ տարիքային խմբերի կանանց և տղամարդկանց աշխատաշուկայում ներգրավվածության, բարձրագույն կրթություն ստացածների, ժամավճարով/կես դրույքով/ամբողջական դրույքով վարձատրության չափերի և մի շարք այլ ցուցանիշների գենդերային խզվածքի վերաբերյալ, ընդ որում ուսումնասիրությունների շրջանակում մի շարք ցուցանիշների հաշվարկման համար հիմք են ընդունվել ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայքում հրապարակված առավել նոր տվյալները (2023-2024թթ.):

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ աշխատաշուկայում ներգրավվածության գենդերային ամենամեծ խզվածքը 25-34 և 55-64 տարիքային խմբերում է: Սա հանգեցնում է այն եզրակացության, որ նշված խզվածքի հիմնական գործոններն են՝ ընտանիքի ձևավորումը, երեխա ունենալու և խնամքի պարտականությունները (25-34 տարիքային խմբի համար), ինչպես նաև թոռների կամ տարեց հարազատների խնամակալությունը կամ աշխատանքի ընդունելու տարիքային խտրականությունը (55-64 տարիքային խմբի համար):

Արդյունքում առաջարկվել է կիրառել մի շարք գործիքներ վերոնշյալ խզվածքը նվազեցնելու նպատակով: ՀՀ ՊԵԿ աշխատակիցների կողմից առաջարկվել է կիրառել ժամանակավոր հարկային արտոնություններ, որոնք հնարավորություն կտան կանանց ներգրավել աշխատաշուկայում՝ նպաստելով տնտեսական աճին: Օրինակ, նոր ձեռնարկատիրական գործունեություն սկսող կանանց տրամադրել 1-2 տարվա համար հարկային արտոնություններ, ինչը կարող է գրավիչ լինել նաև Հայաստանից դուրս գտնվող կանանց համար (ՀՀ քաղաքացիների և ոչ միայն)՝ խրախուսելով նրանց վերադառնալ հայրենիք: Բացի այդ, այն գործատուները, ովքեր աշխատանքի կընդունեն երբևէ չաշխատած կանանց, հնարավորություն կունենան աշխատանքի ընդունելու առաջին տարում յուրաքանչյուր կնոջ համար հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների, ինչպես նաև քաղաքացիաիրավական պայմանագրից ստացվող եկամուտների հանրագումարի 200 տոկոսը նվազեցնել համախառն եկամտից: Առաջարկվել է նաև զարգացնել հեռավար աշխատանքի հնարավորությունները և ապահովել պետության աջակցությունը մինչև երկու տարեկան երեխաների խնամքի համար դայակներին վճարվող վարձատրության որոշակի մասով: Այս միջոցառումը կօգնի երեխայի խնամքի արձակուրդում գտնվող կանանց ավելի վաղ վերադառնալ աշխատանքի՝ միաժամանակ ապահովելով 55-64 տարիքային խմբի կանանց զբաղվածություն:

ՀՀ մասնակիցների կողմից շնորհանդեսի ներկայացումից հետո դասընթացավարները շատ բարձր գնահատեցին աշխատանքը՝ ընդգծելով, որ այն ներառում էր ինչպես բազմազան վերլուծություններ, այնպես էլ համապատասխան լուծումների առաջարկներ: Շնորհանդեսում ներկայացված վերլուծությունները

հետաքրքրեցին նաև դասընթացի մյուս մասնակիցներին, և նրանց մեծ մասը հանդես եկավ Հայաստանի վերաբերյալ տարբեր հարցերով:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Դասընթացի ավարտին տրվել են դասընթացին բարեհաջող մասնակցության վերաբերյալ հավաստագրեր:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Միջոցառմանը մասնակցությունը հնարավորություն ընձեռեց ՊԵԿ ներկայացուցիչներին ստանալ տեղեկատվություն առաջատար երկրների գենդերային անհավասարության և մակրոտնտեսական արդյունքների փոխկապակցվածության վերաբերյալ, ինչպես նաև ուսումնասիրել Power BI-ի միջոցով մշակված վերլուծական գործիքները, որոնք անհրաժեշտության դեպքում կարող են կիրառվել ՊԵԿ-ի համապատասխան գործառույթներում:

Միաժամանակ, միջոցառումը ՊԵԿ ներկայացուցիչներին հնարավորություն ընձեռեց նպաստել Հայաստանի փորձի ճանաչելիությանը միջազգային գործընկերների շրջանում, ինչպես նաև հաստատել կապեր մի շարք ոլորտների օտարերկրյա մասնագետների հետ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Իննա Հախումյան

Գրիգոր Հակոբյան

12.02.2025թ